15156

351.75
4-21

2010

1573.

208

Утверждены Его Сіятельствомъ
Временно-исправляющимъ должность
Намѣстника Кавказскаго.
11 Декабря 1881 г.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

MUS. ASIAT. C. A. 1812.

ԿԱՆՈՆՆԵՐ

—

Պետական և հասարակական հիմնարկութիւնների, տան տէրերի, հիւրանոցների տէրերի, քարվանսարաների համար և այլն, որոնց հիման վրա նրանք պէտք է պահեն տնային մատեաններ և հասցէների թերթիկներ։

§ 1. Իւրաքանչիւր տանտէր, մանաւոր, հասարակական, պետական կամ եկեղեցական տների կառավարիչ կամ վերակացու, նոյնպէս և հիւրանոցների, իջևանների կահաւորված սենեակների, կայարանների, քարվանսարաների և դուխանների պահողներ պարտաւորվում են որոշված ձևով պահել տնային մատեաններ և արձանագրել նրանցում տան մէջ մշտապէս, կամ ժամանակաւորապէս ապրող բոլոր անձանց, առանց բացառութեան։ Բացի այդ վերոյիշեալ

2001

351.75
4-21

ձինք պարտաւոր են տան մէջ կացողների
ամեն տեսակ փոփոխութեան մասին, որ պա-
տահել է զանազան պատճառներից, ինչպէս
բլանկների վրա տեղեկութիւն գրել և ուղար-
կել իրանց պոլիցիական բաժինը 12 ժամ-
վայ ընթացքում:

Նկատ. Այն տների մէջ, որտեղ կան
հիւրանոցներ, քարավանսարաներ, կայարան-
ներ, կահաւորված սենեակներ և այլ
այդպիսի հիմնարկութիւնների տէրերը ան-
ցաթղթերի կանոնների XIV բաժնի 343
յօդուածի հիման վրա ընդհանուր կանոն-
ների համեմատ տեղեկութիւն են տալիս
եկողների և նրանց սենեակների մէջ բնակ-
վողների մասին, նոյնպէս և գնացողների
մասին:

§ 2. Պոլիցիայից նշանակված օրը տան-
տէրերը և կառավարիչները պէտք է արձա-
նագրեն տնային մատեանում տան մէջ ապ-
րող բոլոր անձանց առանց բացառութեան
թէ արական և թէ իգական սեռի, ինչ հա-
սակի և կոչման էլ լինեն նրանք, պոլիցիայից
նշանակված յայտնի օրը, առաւօտեան մինչև
8 ժամը:

§ 3. Համեմատ 2 յօդուածի տնային գրքի մէջ պէտք է արձանագրվեն ա) տան տէրերը, նրանց ընտանիքը և ծառաները, բ) տան մէջ բնակվողները, նրանց ընտանիքը և ծառաները, գ) Թիֆլիս եկողները և կամ տան տէրերի մօտ կամ տան մէջ բնակվողների մօտ մնացողները և եկողների ծառաները:

Նկատ. Եկողները պէտք է արձանագրվեն տնային գրքի մէջ մինչև անգամ այն դէպքում, եթէ նրանք նոյն օրը թողնեն Թիֆլիսը:

§ 4. Թիֆլիսի բոլոր բնակիչներին յայտնի օրը որոշված գրքի մէջ արձանագրելուց յետոյ տան տէրերը, կառավարիչները և վերակացուները 12 ժամվայ ընթացքում պարտաւոր են արտագրել գրքից առանձին հաստիքների թերթերի վրա երկու օրինակ և ուղարկել իրանց պոլիցիական բաժինը:

§ 5. Երբ տանտէրերը, կառավարիչները, վերակացուները և այլն կը կատարեն վերոյիշեալ կանոնները, այնուհետև իւրաքանչիւր փոփոխութեան մասին, որ կը պատահի տան բնակիչների մէջ մահուան, տան կենո-

ղի տեղափոխութեան, ծառային արձակելու, մի նոր եկողի կամ գնացողի պատճառով գրքի մէջ հարկաւոր նշանն անելուց յետոյ իրանց պօլիցիական բաժնին ուղարկում են 2 օրինակ հասցէի թերթեր 12 ժամվայ ընթացքում կատարված փոփոխութենից յետոյ:

§ 6. Եթէ տան տէրերը, կառավարիչները կամ վերակացուները չը գիտեն ռուսաց լեզուն, կարող են պահել տնային գրքերը հայերէն, վրացերէն կամ թուրքերէն լեզուով: Գրքերի մէջ արձանագրվող տեղեկութիւնները, բաժինների և վերնագիրների համեմատ, պէտք է արձանագրվեն մաքուր, պարզ և որոշ:

§ 7. Տնային գրքերը միշտապէս կանոնաւոր և մաքուր պէտք է պահվեն:

Ն կ ա տ. Տնային գրքերը պէտք է ներկայացնել պօլիցիականներին հէնց որ նրանք կը պահանջեն:

§ 8. Տան տէրերը, կառավարիչները, վերակացուները պէտք է ի նկատի ունենան հետևեալ կանոնները.

1) Ս պ ի տ ա կ թերթերը գործ են ածվում տեղեկութիւններ գրելու համար այն անձանց մասին, որոնք ապրում են թիֆլիսի մէջ, կամ տեղափոխվում են մի տանից միւս տուն մի և նոյն պօլիցիական բաժնի սահմանում:

2) Կ ա ն ա չ թերթերը գործ են ածվում տեղեկութիւններ գրելու այն անձանց մասին, որոնք դուրս են գնում թիֆլիսից, մնում են հիւանդանոց, կալանաւորվում են կամ մեռնում են:

3) Բ ա ց-դ ե ղ ի ն թերթերը գործ են ածվում թիֆլիսում ապրող պահեստի զինուորների համար:

4) Մ ա ւ ի թերթերը գործ են ածվում տեղեկութիւններ մոցնելու համար հասարակաց կանանց և պօլիցիայի հսկողութեան տակ եղած անձանց մասին:

Ն կ ա տ. Բաց-դեղին և մաւի թերթերը գործ են ածվում միշտ, երբ հարկաւոր է տեղեկութիւն տալ այն անձանց մասին, որոնց համար նրանք որոշված են:

5) Ուրաքանչիւր անձ, որ ապրում է թիֆլիսի մէջ, դուրս է գնում քաղաքից կամ վերադառնում է որ և է պատճառով, պէտք

50467-ah
ՊԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ-Арм.ССР
36225-66

է արձանագրվի առանձին հասցեի թերթի վրա։

6) Ամուսին կանայք, չը բացառելով և նրանց, որոնք ապրում են իրանց ամուսիններ։ հետ, արձանագրվում են ամուսիններ։ից առանձին թերթերի մէջ։ Իսկ նրանց մօտ եղած անչափահաս երեխաները արձանագրվում են իրանց մայրերի թերթերի մէջ։

7) Հասցեի թերթերի մէջ չեն արձանագրվում առանձնապէս ա) բոլոր անչափահասները, որոնք ծնողների կամ այլ ազգականների հետ են ապրում, բ) բոլոր ուսումնարանների աշակերտները, որոնք նոյն իսկ ուսումնարանների մէջ են բնակվում, գ) զօրաբաժինների մէջ ծառայող զինուորները, դ) եպիսկոպոսների կամ վանքերի երգեցիկները և ծառաները, ե) նրանք, որոնք ժամանակաւորապէս գալիս են մի բան ծախելու և ապրանքը չը վաճառելու պատճառով գիշերումն քաղաքի մէջ։

8) Հասցեի թերթերը պէտք է գրված լինեն մեծ տառերով և պարզ, և պէտք է

պատասխանեն նրանց մէջ գրված բոլոր հարցերին։

9) Հասցեի թերթերը ուղարկվում են պօլիցիա առանձին ցուցակների հետ, որոնց մէջ նշանակված են փողոցի անունը, տան համարը, տանտիրոջ անունը, ազգը, կոչումը և աստիճանը և իւրաքանչիւր գոյնի թերթերի թիւը։ Այդ ցուցակը պէտք է ստորագրված լինի ուղարկող անձից, նոյնպէս պէտք է նշանակված լինեն. թուականը, ամիսը և ամսաթիւը։

10) Թիֆլիս եկող իւրաքանչիւր անձն պարտաւոր է տալ այն կառավարչին կամ տիրոջը, որի տան մէջ կը կանգնի, իր անցագրի հետ միասին տեղեկութիւններ իր կնոջ և փոքր երեխաների մասին, եթէ ունի, սպիտակ գոյնի հասցեի թերթիկների վրա, որոնց նրան կը յանձնէ տան տերը։ Հասցեի թերթիկների մէջ եղած հարցերով պահանջած տեղեկութիւնները պէտք է քաղվեն անցագրից կամ վկայագրից և այլն։ Տան տերը կամ տան կառավարիչը հասցեի թերթի վրա գրած տեղեկութիւնները տնային մատեանների մէջ մտցնելուց յետոյ, պէտք է

թերթիկները ուղարկէ պոլիցիական բաժինը։

11) Թիֆլիսի մէջ պոլիցիական մի բաժնից միւս բաժինը տեղափոխվող անձը պարտաւոր է տալ տան տիրոջը կամ կառավարչին հասցէի երկու թերթիկներ. սպիտակ և կանաչ։ Երկու թերթիկներն էլ ուղարկվում են պոլիցիական այն բաժինը, որտեղից այդ անձը տեղափոխվում է։

Ն կ ա տ. Նոյն անձը բնակութեան նոր տեղը տալիս է իր մասին հասցէի սպիտակ երկու թերթիկներ։

12) Երբ տան կեցողը տեղափոխվում է մի տանից միւսը պոլիցիական նոյն բաժնի սահմաններում՝ երկու տան տէրերն էլ ուղարկում են պոլիցիական բաժնին հասցէի սպիտակ թերթիկներ իւրաքանչիւրը երկու օրինակ։

13) Երբ բարձրանում են կամ ցածրանում են աստիճանով, կոչումով, օրինակ մի չին են ստանում, կամ վաճառականը մեշչան է դառնում, չին ստացող կամ մի այլ կոչումի փոխված անձինք պարտաւոր են դրա մասին յայտնել տան տիրոջը կամ տան կառավարչին, իսկ վերջիններները այդ անձի,

նրա կնոջ և ընտանիքի մասին պարտաւոր են տեղեկութիւն տալ պոլիցիային հասցէի երկու թերթիկներով։

14) Թիֆլիսից դուրս գնացող անձանց մասին տան տէրերը կամ կառավարիչները իւրաքանչիւր անձի մասին հասցէի երկու թերթիկով տեղեկութիւն պէտք է տան պոլիցիային։ Կանաչ թերթիկների վրա տեղեկութիւն է տրվում այն անձանց մասին, որոնք տանից գնում են հիւանդանոց կամ կալանաւորվում են։ Մի և նոյն ժամանակ քաղաքից դուրս գնացողի մասին գրվում է, թէ նա որ քաղաքն է գնացել, հիւանդանոց տեղափոխվողի մասին գրվում է „հիւանդանոց“, կալանաւորվածի մասին „կալանաւորված է“։ Բացի այդ նոյն թերթիկների վրա պէտք է նշանակել, թէ այս կամ այն անձն երբ է դուրս գնացել, այսինքն ամսին, ամիսը և թւականը։

§ 9. Եթէ պոլիցիան կիմանայ, որ տան կեցողները տեղափոխվելու ժամանակ ճիշտ տեղեկութիւն չեն տուել իրանց նոր բնակարանի մասին, կամ տան տէրերը, կառավարիչները և վերակացուները դանդաղու-

թեամբ են հասցրել պոլիցիային հասցէի թերթիկները, մեղաւորները ենթարկվում են հաշտարար դատաւորներից դրվող օրէնքների 58 և 59 յօդուածների համեմատ պատժին։

§ 10. Իւրաքանչիւր անձն կամ ընկերութիւն, որ Թիֆլիսի մէջ որ և է անշարժ կայքի կամ հիմնարկութեան տէր է դառնում, օրինակ առևտրական, արհեստական կամ գործարանական և այլն, նոյնպէս և նոր գործակալութիւնների, բանկային գրասենեակների, պանսիօնների և առհասարակ ամեն տեսակ հիմնարկութեան, պարտաւոր է մի վկայագրի հետ սեփականութեան, իրաւունքի մասին տալ տանտիրոջը կամ կառավարչին սպիտակ թերթիկների վրա այդ թերթիկների մէջ պահանջած բոլոր տեղեկութիւնները։

Այդ տեղեկութիւնները հասցէի թերթիկների մէջ գրելուց յետոյ տան տէրերը առաջ քան թէ նրանց ուղարկեն պոլիցիական բաժինը, պարտաւոր են բոլորը արձանագրել տնային մատեանի մէջ։

§ 11. Երբ մի հիմնարկութիւն տեղափոխվում է մի տանից միւս տուն մի և

նոյն պոլիցիական բաժնի սահմաններում, պէտք է ձեռնարկվել նոյն կանոններով, որոնք սահմանված են մասնաւոր անձանց տեղափոխման համար։

§ 12. Երբ մի հիմնարկութիւն տեղափոխվում է քաղաքի մի բաժնից մի այլ բաժին, պէտք է ձեռնարկվել նոյն կանոններով, որոնք սահմանված են այդ դէպքում մասնաւոր անձանց համար։

§ 13. Եթէ հիմնարկութեան տեղափոխութիւնը չը կայացաւ, այդ դէպքում պէտք է նոյնպէս վարվել ինչպէս և մասնաւոր անձանց հետ։

§ 14. Թերթիկները հիմնարկութիւնների մասին ներկայացնվում են պոլիցիային բացի նրանցից, որոնք տրվում են այն անձանց մասին, որոնք ծառայում են այդ հիմնարկութեան մէջ Թիֆլիսում, կամ երբ վերջինները հիմնարկութեան հետ տեղափոխվում են մի տանից միւս տուն։

§ 15. Երբ հիմնարկութիւնը մի տիրոջից միւսին է անցնում, պէտք է յայտնել տան տիրոջը կամ տան կառավարչին, որտեղ գտնվում է այդ հիմնարկութիւնը, իսկ տան

104 ZuB

տէրը այդ բանը պէտք է յայտնէ տեղական պօլիցիական բաժնին բացատրելով թէ հիմնարկութիւնը ում ձեռքից ում ձեռքը անցաւ, ներկայացնելով անհրաժեշտ դօկումենտները նոր տիրոջ սեփականութեան իրաւունքի մասին:

§ 16. Եթէ հիմնարկութեան տէրը մեռնի և կայքը անցնի ժառանգներին, որոնց ազգանունները զանազան են, նրանցից իւրաքանչիւրի մասին պէտք է երկու թերթ ներկայացնել և իւրաքանչիւրի մէջ նշանակել թէ կայքի տեսակը և թէ այն, որ այդ կայքը մի քանիսի սեփականութիւն է:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

нз. Тифлисъ, 29 Декабря 1881 года.

351.75
4-21

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ՀԱՅԻՍ
ГСС. Библиотека
ZUUՊ-Арм ССР
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆ
им. А. Масникяна

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0048054

Типографія Главнаго Управленія Намѣст. Кавказскаго.